ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

04 մայիսի 2016 թ N 13 –Ն

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ մարտի 31-ի N344-Ն որոշմամբ Կողբ համայնքին պետական աջակցության նպատակով հատկացված 3467.2հազ.դրամ գումարը բաշխելու, ինչպես նաև բյուջետային տարում ընթացիկ այլ ֆինանսատնտեսական ծախսումներ կատարելու նպատակով, «Հայաստանի Հանարպետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին և համայնքի վարչական բյուջեի եկամուտներ մասում ավելացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված 3467.2հազ.դրամ այլ դոտացիան:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին կատարելու բյուջեի ծախսային մասի հետևյալ ներքին վերաբաշխումները՝

2/1. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 1դաս 1 /ՏԻՄ. պահպանում/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4111-ին /աշխատանքի վարձատրություն/ ավելացնել 304.2հազ. դրամ հոդված 4112-ին /պարգևատումներ/ 1537.0հազ.դրամ և հոդված 4264-ին /տրանսպորտային նյութեր/՝ 200.0հազ.դրամ,

2/2. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 6 դաս 1 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4239 -ին / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ավելացնել 200.0 հազ. դրամ,

2/3. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 4 դաս 1 /փողոցային լուսավորություն/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4212-ին /էներգետիկ ծառայություններ/ ավելացնել 300.0հազ. դրամ և հոդված 4269 -ին /հատուկ նպատակային նյութեր/՝ 570.0հազ.դրամ,

2/4. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 10 խումբ 7 դաս 1 /սոցիալական հատուկ արտոնություններ/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4729 -ին / այլ նպաստներ բյուջեից/ ավելացնել 250.0 հազ. դրամ,

2/5. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 1 դաս 1 /աղբահանում/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4511 -ին / սուբսիդիա/ ավելացնել 106.0 հազ. դրամ:

3. Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝ բյուջեի գործառնական դասակարգման բաժին 8 խումբ 3 դաս 1 /հեռուստառադիոհաղորդումներ/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4234-ից /տեղեկատվական ծառայություն/ պակասեցնելու 150.0հազ.դրամ և այն ավելացնելու բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 4 դաս 1 /փողոցային լուսավորություն/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4269 -ին /հատուկ նպատակային նյութեր/:

4. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 6 դաս 1 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4235-ից /խորհրդատվական ծառայություններ/ պակասեցնել 960.0հազ.դրամ և ավելացնել՝

4.1. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 1 դաս 1 /աղբահանում/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4511-ին /սուբսիդիա/՝ 660.0հազ.դրամ,

4.2. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 2 դաս 1 /գյուղատնտեսություն/ տնտեսագիտական դասակարգման հոդված 4657-ին /այլ կապիտալ դրամաշնորհներ/՝ 300.0հազ.դրամ:

5. Բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 6 դաս 1 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ տնտեսագիտական դասակարգման հոդված 5113-ից /շենք–շինությունների կապիտալ վերանորոգում/ պակասեցնել 980.0հազ.դրամ և նույն չափով ավելացնել բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 4 դաս 1 /փողոցային լուսավորություն/ տնտեսագիտական դասակարգման հոդված 5113-ին /շենք–շինությունների կապիտալ վերանորոգում /:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -7

Դեմ – 1

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

06 մայիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

04 մայիսի 2016 թ N 14 –Ա

«ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԿՈՂԲԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ_Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26/-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝«Կողբի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում էլեկտրիկի 0.5 դրույք հաստիքային միավոր սահմանելու մասին:

2.Հաշվի առնելով «Կողբի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի ֆինանսավորման հետ կապված խնդիրները հաստատել `«Կողբի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչաձերը համաձայն հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Կողբ համայնքի ավագանու 2016թ մարտի 11-ի «Կողբի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N6-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 8

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ
06 մայիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

04 մայիսի 2016թ N15–Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՍՈՒՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.03.2016 Թ N7-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի 1 լոտով աճուրդ վաճառք հայտարարելու մասին, այդ թվում՝

1.1 11-041-0356-0051 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.04949 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի համար,

1.2 11-041-0355-0005 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.19928 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի համար,

1.3 11-041-0420-0011 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.1133 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողի համար,

1.4 11-041-0419-0004 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.08535 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտի համար,

1.5 11-041-0360-0016 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.11781 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողի համար:

Աճուրդի դրվելիք հողամասերի լոտի մեկնարկային գին սահմանել 115900 դրամ,սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 11-041-0350-0048 կադաստրային ծածկագրով 0.13524 հա հողամասի աճուրդ վաճառք հայտարարելու մասին:

11-041-0350-0048 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.13524 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողի համար:

Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 25000 դրամ,սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

3. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին.

Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարություն հրապարակել աճուրդների

անցկացման տեղի ու ժամանակի, հողամասերի գտնվելու վայրի, աճուրդներին ներկայացվող այլ պայմանների և պահանջների մասին:

4.Հաշվի առնելով որ սույն հարցի վերաբերյալ համայնքի ավագանու 11.03.2016թ N7-Ա որոշման մեջ առանձին տեխնիկական անճշտություններ են թույլ տրվել հողամասերի կադաստրային ծածկագրերի և աճուրդի դրվելիք հողամասերի մեկնարկային գների մեջ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1/-ին կետի բ/ ենթակետի կարգով ուժը կորցրած ճանաչել Կողբ համայնքի ավագանու 11.03.2016թ N7-Ա որոշումը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -8

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ
04 մայիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2016թ. 16-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ և 20-րդ կետերի , ՀՀ Կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1 .Համայնքային սեփականություն հանդիսացող 1 հեկտար արոտավայրի համար հարկը հաշվարկել զուտ եկամտի 15% -ի չափով՝ 3945 ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվ ան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐԱՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Կողմ - 8
Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ա. ԱԲՈՎՅԱՆ

04 մայիսի 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

04 մայիսի 2016թ 17-Ա

ԿՈՂԲԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԸ ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է որ Բագրատ Սաղաթելի Սահակյանը (ծնված 1916թ, մահացած 2004թ) իր երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում անշահախնդրորեն նվիրվել է երեխաների կրթության և դաստիարակության պատասխանատու գործին: Նրա հարյուրավոր սաներ սովորել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, դարձել ժողովրդական տնտեսության, գիտության և մշակույթի ոլորտի ճանաչված գործիչներ:
Անբասիր աշխատանքի և երկարամյա վաստակի համար Բ.Ս.Սահակյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում: Նա պարգևատրվել է նաև խորհրդային տարիների ամենաբարձր պարգևներից մեկով՝ Լենինի շքանշանով:
Բ.Ս.Սահակյանին՝ որպես ազնիվ, համեստ ու պատվասեր համագյուղացու, երախտագիտությամբ են հիշում նրան ճանաչող բոլոր կողբեցիները:
Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի N 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Կողբի թիվ 2 դպրոցի մանկավարժական կոլեկտիվի 2016թ փետրվարի 4-ի որոշումը՝ դպրոցը Բագրատ Սահակյանի անվամբ անվանակոչելու մասին

Ավագանին որոշեց

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի փողոց 1, թիվ 6 հասցեում գտնվող թիվ 2 միջնակարգ դպրոցն անվանակոչել <<Բագրատ Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց>> :

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝ թիվ 2 դպրոցի անվանման պետական գրանցում կատարելու համար սույն որոշումը ուղարկել պետական լիազոր մարմնին:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ
Կողմ—8
Դեմ - 0
Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԲՈՎՅԱՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ *07402376*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2016թ N21–Ա

11-041 -0608-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0184 ՀԵԿՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 2016թ հունիսի 1-ի N34 դրական եզրակացությունը

Ավագանին որոշեց

1. Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.0184 հեկտար խոտհարք / 11 -041 -0608 – 0001 կադաստրային ծածկագիր/ փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:
2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝ հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցում իրականացնելուց հետո համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Տավուշի մարզպետարանին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

06հուլիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2016թ N20–Ա

ԿՈՂԲԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԿՈՂԲԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԿ_ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 2001թ ապրիլի 12-ի N286 որոշման 7-րդ մասի 39-րդ և 41-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Կողբի ժողովրդական արհեստների և երիտասարդության գեղագիտական դաստիարակության կենտրոնի շենքը 1207.6քմ սպասարկման տարածքով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Կողբի գեղարվեստի դպրոց» գիտակրթական հասարակական կազմակերպությանը:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին
ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 686-րդ հոդվածին համապատասխան «Կողբի գեղարվեստի դպրոց» ՀԿ-ի հետ կնքել շենքը և հողամասը անհատույց օգտագործման տրամադրելու մասին պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ -5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Ի
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ
06հուլիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2016թ N19–Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11 -041 – 0012 -0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 210 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝
11-041-0012-0022 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 210 քմ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի աճուրդ վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 47000 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին.
Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարություն հրապարակել աճուրդի անցկացման տեղի ու ժամանակի, հողամասերի գտնվելու վայրի, աճուրդին ներկայացվող այլ պայմանների և պահանջների մասին:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Ի
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ

06հուլիսի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2016թ N18 –Ա

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԼԵՎՈՆ ԱԲՈՎՅԱՆԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է որ համայնքի քառամյա զարգացման ծրագրով նախատեսվել է մասնավոր հատվածի ներդրումների հաշվին կառուցել և 2016թ տեղադրել Կողբի խորհրդանիշը:
Կողբեցի քանդակագործ Լևոն Աբովյանը քանդակել է հայ ժողովրդի անցած ուղին և գալիքը խորհրդանշող հուշասյուն, որը կարող է նաև Կողբի և Կողբեցիների խորհրդանիշը հանդիսանալ:
Այն մեկ օրինակից ստեղծագործական նմուշ է:
Նկատի ունենալով, որ քանդակագործ Լևոն Աբովյանի ստեղծագործությունն իր գաղափարական բովանդակությամբ համահունչ է Կողբ համայնքի խորհրդանիշ - հուշասյան գաղափարին, հավանության է արժանացել ավագանու և Կողբեցիների կողմից, իսկ Ամերիկայի Հայ Օգնության ֆոնդի հայաստանի մասնաճյուղը համայնքի արտաբյուջետային հաշվին է փոխանցել նրա ձեռք բերման և տեղադրման աշխատանքների համար անհարժեշտ 9556000.00 դրամ գումարը

Ավագանին որոշեց

1.Թույլատրել Կողբ համայնքի ղեկավարին.
Առաջնորդվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1/-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 5-րդ մասի 25-րդ կետի 5/ -րդ ենթակետի պահանջներով, քանդակագործ Լևոն Աբովյանից գնել քարակերտ հուշասյունը՝ այն հետագայում որպես Կողբի խորհրդանիշ գյուղում տեղադրելու նպատակով:

2.Առաջարկել Կողբ համայքնի ղեկավարին օրենքով սահմանված կարգով Լևոն Աբովյանի հետ կնքել ապրանքների ձեռք բերման պայմանգիր:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՈՎՅԱՆ
06 հուլիսի 2016թ